



Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N- 91
< 24 > - 09 2013թ.

ք. Արտաշատ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՈՒՄ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ
2012թ ՓԵՏՐՎԱՐԻ 2-Ի ԹԻՎ-11 ՈՐՈՇՈՒՄԸ
ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ.օգոստոսի 18-ի «Վտանգավոր տարածքից բնակչության տարահանման կարգը հաստատելու մասին» թիվ 1180-Ն որոշման.

Որոշում են՝

1. Ստեղծել Արարատի մարզի բնակչության տարահանման հանձնաժողով՝ /համաձայն հավելված 1-ի/
2. Արարատի մարզի տարահանման հանձնաժողովի կազմում ստեղծել աշխատանքային խմբեր՝ համաձայն հավելված 2-ի/
3. Հաստատել տարահանման հանձնաժողովի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 3-ի/
4. Առաջարկել մարզի համայնքների ղեկավարներին, իրենց վարչական տարածքներում ստեղծել՝
 - Տարահանման հանձնաժողովներ
 - Համապատասխան քանակի տարահանման հավաքակայաններ
 - Ժամանակավոր տեղաբաշխման կետեր
5. Մարզի համայնքների ղեկավարներին՝

1) Պարտավորեցնել համայնքի տարածքում գործող խոշոր ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարներին՝ ստեղծել օբյեկտային տարահանման հանձնաժողովներ.

2) Որոշել տարահանման հավաքակայանների կառուցվածքը և կազմը, մշակել ՏՀԿ կառուցվածքային մարմինների գործառնական պարտականությունները և ներկայացնել հաստատման, եռամսյա ժամկետում:

6. Ուժը կորցրած ճանաչել Արարատի մարզպետի 02.02.2012թ <<Արարատի մարզում բնակչության տարահանման հանձնաժողով ստեղծելու մասին>> թիվ 11, որոշումը:

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Արարատի մարզպետի տեղակալ, տարահանման հանձնաժողովի նախագահ Ա.Մուրադյանի վրա:

ՄԱՐԶՊԵՏ՝



Է.ՄԱՐԱԵՂՅԱՆ



ՀՀ Արարատի մարզպետի
2013թ. սեպտեմբերի 24-ի թիվ 99 որոշման

Արարատի մարզի բնակչության տարածաշրջանի հանձնաժողովի կազմը.

- Ա.Մուրադյան Հանձնաժողովի նախագահ՝
Արարատի մարզպետի տեղակալ.
- Ա.Լավայան Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝
ՏԻ և ՀԳՏՄ հարցերով
վարչության պետ.
- Մ.Ստեփանյան Հանձնաժողովի քարտուղար՝
Արարատի մարզպետարանի
քարտուղարության պետ:

Հանձնաժողովի անդամներ՝

- Գ.Մուրադյան - Արարատի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Ա.Սարգսյան - Քաղաքաշինության վարչության
ճարտարապետաշինարարական բաժնի
գլխավոր մասնագետ
- Հ.Բաղայան - Առողջապահության և սոցիալական
ապահովության վարչության առողջապահության
բաժնի գլխավոր մասնագետ
- Ա.Հակոբյան - Քաղաքաշինության վարչության
տրանսպորտի և ճանապարհաշինության
բաժնի գլխավոր մասնագետ
- Լ.Խաչատրյան - Ֆինանսական և սոցիալ- տնտեսական զարգացման
վարչության ֆինանսատնտեսագիտական
բաժնի պետ
- Հ.Ավետիսյան - «Հայ Էլ. ցանցեր» ՓԲԸ «Արաքս»
մասնաճյուղի գլխավոր ճարտարագետ
- Վ.Սանոյան - Գյուղատնտեսության և բնապահպանության
վարչության գլխավոր մասնագետ
- Վ.Հովհաննիսյան - Ոստիկանության Արարատի մարզային
վարչության շտաբի պետ

- Մ. Դավթյան - Քաղաքաշինության վարչության
ճարտարապետաշինարարական բաժնի
գլխավոր մասնագետ
- Ա. Հակոբյան - Կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
- Գ. Ավետիսյան - Առողջապահության և սոցիալական ապահովության
վարչության պետ
- Ա. Մուրադյան - <<ԱրմենՏել>> ՓԲԸ-ի Կենտրոնական տարածքային
կենտրոնի Հ և Տ գրասենյակի ղեկավար

Աշխատակազմի ղեկավար՝



Ա. Վարդանյան



ՀԱՎԵԼՎԱԾ 2

Պարատի մարզպետի
մայ 24 հիվ 1 որոշման

Արարատի մարզի բնակչության տարահանման հանձնաժողովի աշխատանքային
խմբերը

1. Վտանգավոր տարածքից բնակչության դուրս բերման հաշվառման խումբ.

Խմբի ղեկավար՝

Ա.Մկրտչյան - Կրթության, մշակույթի և սպորտի
վարչության կրթության բաժնի պետ

Խմբի անդամներ՝

Ա. Պետրոսյան - Կրթության, մշակույթի և սպորտի
վարչության կրթության բաժնի
գլխավոր մասնագետ

Ս. Շահինյան - Կրթության, մշակույթի և սպորտի
վարչության կրթության բաժնի
առաջատար մասնագետ

Մ. Կարապետյան - Կրթության, մշակույթի և սպորտի
վարչության մշակույթի և սպորտի
բաժնի պետ

Ա. Նազարյան - Կրթության, մշակույթի և սպորտի
վարչության մշակույթի և սպորտի
բաժնի գլխավոր մասնագետ

2. Անվտանգ գոտում բնակչության տեղաբաշխման հաշվառման խումբ.

Խմբի ղեկավար՝

Հ. Տերտերյան - Գյուղատնտեսության և բնապահպանության
վարչության գյուղատնտեսության
բաժնի պետ

Խմբի անդամներ՝

Ե. Հակոբյան - Քաղաքաշինության վարչության
գլխավոր մասնագետ

Ո. Միսակյան - Հողաշինության և հողօգտագործման բաժնի
առաջին կարգի մասնագետ

Մ. Դավթյան - Քաղաքաշինության վարչության
ճարտարապետաշինարարական բաժնի

Ա.Սարգսյան - գլխավոր մասնագետ
Քաղաքաշինության վարչության
ճարտարապետաշինարարական բաժնի
գլխավոր մասնագետ

3. Հիվանդանոցի անձնակազմի և հիվանդների անվտանգ դուրս բերման հաշվառման խումբ՝

Խմբի ղեկավար՝

Հ.Բադալյան - Առողջապահության և սոցիալական
ապահովության վարչության առողջապահության
բաժնի գլխավոր մասնագետ

Խմբի անդամներ՝

Լ.Հակոբյան - Առողջապահության և սոցիալական
ապահովության վարչության առողջապահության
բաժնի առաջատար մասնագետ

Գ.Ասատրյան - Առողջապահության և սոցիալական
ապահովության վարչության
սոցիալական ապահովության բաժնի
գլխավոր մասնագետ

Վ.Ղազարյան - Առողջապահության և սոցիալական
ապահովության վարչության
սոցիալական ապահովության բաժնի
առաջատար մասնագետ

4. Տրանսպորտային ապահովման խումբ.


Խմբի ղեկավար՝

Լ.Լևոնյան - Արտաշատի ԲՈՒԱՏՁ ՍՊԸ-ի ավտոտրանսպորտի
շահագործման բաժնի պետ

Խմբի անդամներ՝

Հ.Առաքելյան - ՏԻ և ՀԳՏՄ հարցերով վարչության
ՏԻ և համայնքային ծառայության
հարցերի բաժնի պետ

Վ.Գրիգորյան - Քաղաքաշինության վարչության
տրանսպորտի և ճանապարհաշինության
բաժնի առաջատար մասնագետ

Աշխատակազմի ղեկավար՝  Ա.Վարդանյան



Հաստատված է

Հարատի մարզպետի

2013թ. N 91 որոշմամբ

Կանոնադրություն

տարահանման հանձնաժողովի

I. Ընդհանուր դրույթներ

1. Տարահանման հանձնաժողովի մասին կանոնադրությունը սահմանում է տարահանման հանձնաժողովի ստեղծման կարգը, կազմը և հիմնական խնդիրները խաղաղ պայմաններում, ԱԻ ծագման դեպքում և ռազմական դրության ժամանակ:

2. Տարահանման հանձնաժողովը ստեղծվում է մարզպետի որոշմամբ, որպես մշտական գործող տարահանման մարմին՝ բնակչության, նյութական և մշակութային արժեքների անվտանգ տարածքներ տարահանման, միջոցառումների նախօրոք պլանավորման, տարահանման մարմինների ստեղծման ու նախապատրաստման և տարահանման միջոցառումների անցկացման ու բազմակողմանի ապահովման նպատակով:

3. Տարահանման հանձնաժողովի գործունեության ընդհանուր ղեկավարումը իրականացնում է մարզպետը: Տարահանման հանձնաժողովի անմիջական ղեկավարումը դրվում է մարզպետի տեղակալի՝ տարահանման հանձնաժողովի նախագահի վրա:

4. Տարահանման հանձնաժողովն աշխատում է ՀՀ ԱԻՆ-ի հետ համագործակցությամբ, որն իրականացնում է նրա գործունեության կազմակերպամեթոդական ապահովումը:

5. Տարահանման հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Քաղաքացիական պաշտպանության մասին» և «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքներով, ՀՀ կառավարության որոշումներով, այլ նորմատիվ-իրավական փաստաթղթերով և սույն կանոնադրությամբ:

II. Տարահանման հանձնաժողովի հիմնական խնդիրները

6. Խաղաղ ժամանակ՝

- 1) ՀՀ ԱԻՆ ՓԾ ՄՓՎ-ի հետ համատեղ ռազմական դրության ժամանակ և ԱԻ ծագման ու սպառնալիքի դեպքում բնակչության տարահանման պլանի մշակում և տարին մեկ անգամ ճշգրտում
- 2) տարահանման մարմինների ստեղծման, համալրման և նախապատրաստման վերահսկողություն
- 3) անվտանգ գոտում տարահանվող բնակչության, նյութական և մշակութային արժեքների տեղաբաշխման վայրերի ընտրում
- 4) տարահանման պլանների, ինչպես նաև տարահանվող բնակչության անվտանգ գոտում ընդունման և տեղաբաշխման, առաջնահերթ կենսաապահովման պլանների մշակման ընթացքի վերահսկողություն
- 5) մասնակցություն տարահանման մարմինների տարահանման միջոցառումների անցկացման պատրաստականության ստուգմանը: Նիստերի պարբերաբար անցկացում ստուգման արդյունքների վերլուծման համար
- 6) զինվորական հրամանատարության հետ փոխհամագործակցության կազմակերպումը՝ տարահանման միջոցառումների պլանավորման, ապահովման և անցկացման հարցերով
- 7) մասնակցություն քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության հարցերով ուսումնավարժություններին՝ մշակված տարահանման փաստաթղթերի իրականության ստուգման և տարահանման միջոցառումների կազմակերպման և անցկացման հարցերով գործնական հմտությունների ձեռքբերման նպատակով
- 8) բնակչության, նյութական և մշակութային արժեքների անվտանգ գոտում ընդունման և տեղաբաշխման նախապատրաստման վերահսկողություն, տարահանման փաստաթղթերի մշակում և հաշվառում:

7. ՔՊ համակարգը խաղաղից ռազմական դրության փոխադրելու դեպքում՝

- 1) կառավարման, կապի և ազդարարման համակարգերի պատրաստականության բերման, ինչպես նաև տարահանման մարմինների ծավալման վերահսկողություն

- 2) տարահանվող բնակչության թվաքանակի և կարգի ճշգրտում, տարահանման պլանների, տարահանման բոլոր տեսակների ապահովման իրականացման և կարգի ճշգրտում
- 3) բժշկական հաստատությունների, նյութական և մշակութային արժեքների անվտանգ գոտի դուրս բերման նախապատրաստման վերահսկողություն
- 4) վտանգավոր գոտուց, ինչպես նաև տարահանման միջանկյալ կետերից բնակչության դուրս բերման և անվտանգ վայրերում տեղաբաշխման համար հատկացված տրանսպորտային միջոցների նախապատրաստման վերահսկողություն
- 5) առկա պաշտպանական կառույցների պատրաստականության բերման վերահսկողություն
- 6) տարահանման հանձնաժողովի հետ անվտանգ գոտում ընդունման, տեղաբաշխման և բնակչության առաջնահերթ կենսաապահովման պլանների ճշգրտում:

8. *Տարահանման անցկացման կարգադրություն ստանալիս՝*

- 1) տարահանման մարմինների կողմից ժամանակին ազդարարման, հավաքի և տարահանված բնակչությանը անվտանգ վայրեր տեղափոխելու աշխատանքների վերահսկողություն
- 2) տարահանման միջոցառումների բազմակողմանի ապահովման, ընդունման, բաշխման և անվտանգ գոտում տարահանված բնակչության առաջնահերթ կենսաապահովման աշխատանքների կազմակերպում և վերահսկողություն
- 3) հարևան մարզերի հետ փոխգործողությունների կազմակերպում՝ նրանց տարածքներում տարահանված բնակչության ընդունման և բաշխման հարցերով
- 4) տարահանման միջոցառումների անցկացման և ապահովման համար տարահանման մարմիններին անհրաժեշտ օգնության ցուցաբերում
- 5) տարահանման պլանի կատարման, տարահանման պլանի ճշգրտման ուղղությամբ առաջարկությունների մշակման վերահսկողություն
- 6) բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման մասին տվյալների հավաք և ամփոփում, դրա մասին զեկուցում վերադասին:

9. *Խաղաղ ժամանակ բնական և տեխնածին բնույթի ԱԽ ծագման սպառնալիքի դեպքում՝*

- 1) տարահանվող բնակչության ընդունման և տեղաբաշխման պլանավորում
- 2) կապի և ազդարարման համակարգերի պատրաստության ստուգում
- 3) տարահանման ենթակա բնակչության թվաքանակի ճշտում
- 4) տարահանման մարմինների ծավալման պատրաստության բերում
- 5) տարահանման միջոցառումների ապահովման համար տրանսպորտի պատրաստության վերահսկողություն
- 6) առկա պաշտպանական կառույցների պատրաստության վերահսկողություն
- 7) անվտանգ վայրերում, ժամանակավոր տեղակայման կետերում տեղաբաշխման վայրերի պատրաստության հսկողություն:

10. *Տարահանման անցկացման կարգադրություն ստանալիս՝*

- 1) տարահանման միջոցառումների անցկացման ընթացքում կառավարման և կապի կազմակերպում
- 2) տրանսպորտային ապահովման կազմակերպում
- 3) բնակչության սանիտարական մշակման, տեխնիկայի և հագուստի հատուկ մշակման (անհրաժեշտության դեպքում) կազմակերպում
- 4) տարահանվող բնակչության ընդունման, հաշվառման և տեղաբաշխման վայրեր տեղափոխման կազմակերպումը
- 5) բնակչության առաջնահերթ կենսաապահովման կազմակերպում:

III. Տարահանման հանձնաժողովի իրավունքները

11. *Տարահանման հանձնաժողովն իրավունք ունի՝*

- 1) Իր իրավասությունների շրջանակներում ընդունելու որոշումներ, որոնք ենթակա են պարտադիր կատարման կազմակերպությունների, հաստատությունների և ձեռնարկությունների համար՝ կապված

տարահանման միջոցառումների անցկացման պլանավորման և բազմակողմանի նախապատրաստման հետ:

- 2) Հարցում անելու պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից, հաստատություններից անհրաժեշտ տվյալների մասին՝ բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման հարցերի ուսումնասիրման և որոշումների ընդունման համար:
- 3) Տարահանման միջոցառումների ապահովման հարցերով ունկնդրել պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, հաստատությունների պաշտոնատար անձանց, սահմանված կարգով անցկացնելու խորհրդակցություն տարահանման մարմինների ներկայացուցիչների հետ:
- 4) Տարահանման մարմինների գործունեության վրա սահմանելու հսկողություն տարահանման միջոցառումների անցկացման պլանավորման և բազմակողմանի նախապատրաստման կազմակերպման հարցերով՝ ՀՀ ԱԻՆ մասնագետների ներգրավմամբ:

IV. Տարահանման հանձնաժողովի կազմակերպական կառուցվածքը

12. Տարահանման հանձնաժողովի կազմակերպական կառուցվածքում ընդգրկվում

են՝

- 1) տարահանման հանձնաժողովի ղեկավարությունը
- 2) վտանգավոր տարածքից բնակչության դուրս բերման հաշվառման խումբ
- 3) անվտանգ տարածքում բնակչության տեղաբաշխման հաշվառման խումբ
- 4) տրանսպորտային ապահովման խումբ
- 5) հիվանդանոցի անձնակազմի և հիվանդների անվտանգ դուրս բերման հաշվառման խումբ
- 6) սննդամթերքի և նյութական արժեքների պաշարների հաշվառման խումբ

13. Տարահանման հանձնաժողովի կազմում նշանակվում են. պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների, տարահանման միջոցառումների ապահովմանը մասնակցող կապ ապահովվող

կազմակերպության, տնտեսության օբյեկտների պաշտոնատար անձինք՝ բացառությամբ զորահավաքային կարգադրագիր ունեցող անձանց:

V. Տարահանման հանձնաժողովի աշխատանքային կարգը

14. Տարահանման հանձնաժողովի նախագահը կրում է անձնական պատասխանատվություն խաղաղ ժամանակ, ԱԻ ծագման դեպքում և ուսումնական դրության ժամանակ տարահանման հանձնաժողովի վրա դրված խնդիրների կատարման համար:

15. Տարահանման հանձնաժողովի աշխատանքը իրականացվում է տարեկան աշխատանքային պլանով: Տարահանման հանձնաժողովի աշխատանքային պլանը մշակվում է տարահանման հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ համագործակցելով ՀՀ ԱԻՆ ՓԾ մարզային փրկարարական վարչության (այսուհետ՝ ՄՓՎ) հետ, և հաստատվում է տարահանման հանձնաժողովի նախագահի կողմից:

16. Տարահանման հանձնաժողովի որոշումները ձևակերպվում են տարահանման հանձնաժողովի արձանագրություններով և ստորագրվում տարահանման հանձնաժողովի նախագահի և տարահանման հանձնաժողովի քարտուղարի կողմից:


17. Տարահանման հանձնաժողովի նիստերն անցկացվում են առնվազն եռամսյակը մեկ անգամ՝ տարահանման հանձնաժողովի նախագահի ղեկավարությամբ: Տարահանման հանձնաժողովի նիստերը և արձանագրությունների նախագծերը պատրաստում է տարահանման հանձնաժողովի աշխատանքային խումբը:

18. Տարահանման հանձնաժողովի առանձին պլանային և արտապլանային նիստերը կարող է անցկացնել տարահանման հանձնաժողովի նախագահի տեղակալը՝ տարահանման հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ:

19. Տարահանման հանձնաժողովի անդամների աշխատատեղեր (հավաքի հաստատված վայրեր) ժամանելու համար սահմանվում են ժամկետները.

- 1) աշխատանքային ժամին՝ 30 րոպե
- 2) ոչ աշխատանքային ժամին՝ 1 ժամ 30րոպե (ձմեռային ժամանակ՝ 2 ժամ)

Աշխատակազմի ղեկավար՝



Ա.Վարդանյան